տէրը: Առջեւի աջ ոտքից կաղում է նա: Տարիներ, շա՜տ տարիներ առաջ այդ ոտքից նա գնդակ ստացաւ մի կռոի մէջ: Բայց այդ չէ արգելում նրան դեռեւս ծառայել իր տիրոջը: Այդ հաւատարիմ զինորական ձին ապրել եւ գործել է իր տիրոջ հետ: Մի ժամանակ միասին զանազան արշաւանքներ էին կատարում: Անցան կռիւները, տիրեց հանգստի եւ խաղաղութեան ժամանակը: Այսօր միասին շրջում են մշակութեան, հունձքի, պտղաբերութեան դաշտերի վրայ: Խելացի ձին այնքան ընտելացած է իր տիրոջ սովորութիւններին, որ գիտէ թէ ամէն առաւօտ դէպի որ կողմերը պէտք է տանել նրան եւ որ տեղերում պէտք է ման ածել: Դանդաղ քայլերով անցնում է նա արտերի մարգերի միջով, այնքան զգոյշ կերպով, որ մի հասկ անգամ կոխ չէ տալիս: Եթէ մի տեղ ջրանցքը պատռուել էր, եւ ջուրը վազում էր դէպի հասունացած հունձքը, որ ջրելու կարօտ չէր, եթէ մի տեղ գիւղացու անասունը մտել էր հարեւանի արտը եւ ոտնակոխ էր արել, եթէ մի տեղ մկներ էին հաւաքուել, մի խօսքով, եթէ մի տեղ որեւէ անկարգութիւն էր նկատում նա, իսկոյն կանգ էր առնում: Ծերունու հետախոյզ աչքերը տեսնում էին այդ բոլորը. ոչ մի թերութիւն չէր վրիպում նրա բազմափորձ տեսութիւնից: Երբ վերադառնում էր գիւղը կանչում էր գիւղացուն եւ նրան նկատողութիւն էր անում: Նրա ամենօրեայ զբօսանքը նրա ամենօրեայ մեծ բաւականութեան զուարճութիւնն էր: Նա տեսնում էր իր աշխատութեան պտուղները եւ ուրախանում էր:

Այդ ծերունին որսորդ Աւօն էր:

Նա գնեց մի քրդուհի այրի կնոջից այդ անբնակ, ամայի լեռնահովիտը իր շրջակայ հողերով եւ այնտեղ հիմնեց մի գիւղ: Նրա տունը առաջին բնակարանը եղաւ, որի շուրջը հետզհետէ շինուեցան այլ տներ: Մի քանի տարուայ ընթացքում կազմուեցաւ մի մեծ գաղթաշենք:

Որսորդը իր գիւղի բոլոր հողերը դարձրեց համայնական սեփականութիւն, իսկ ինքը դարձաւ նոյն համայնքի հասարակ անդամներից մէկը: Թէեւ գիւղական համայնքին պարտաւորեցրեց նա, որ որոշեալ ժամանակի ընթացքում փոքր առ փոքր վճարեն հողերի գինը, բայց այդ վճարը այնքան թեթեւ էր, որ նրանց համար բոլորովին անզգալի եղաւ: Որսորդը այդ գումարը իրան չսեփականացրեց, այլ նրանով հիմնեց մի դպրոց եւ մշտապէս ապահովացրեց դպրոցի յարատեւութիւնը: Նրա վարմունքը այն աստիճան գրաւեց գիւղացիների յարգանքը, որ ամէնքը մեծ երախտագիտութեամբ վերաբերւում էին դէպի նա, որպէս իրանց բարերարին, որպէս իրանց հօրը: Այն դպրոցում սովորում էին եւ մերձակայ գիւղերի երեխաները: Այդ էր պատճառը, որ նոյն յարգանքը վայելում էր նա ամբողջ վիճակի մէջ, եւ դրա համար աղբակեցիք ընտրեցին նրան իրենց գաւառի ներկայացուցիչ, որ «միրէ